

**«2021Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՍՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ
ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼ**

«2021թ. ՀՀ Լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 12-րդ պարբերաշրջանի ընտրական 5-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդիրը բաղկացած է 5 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 20 միավոր:

Հինգերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Հինգերորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2021թ. դեկտեմբերի 5-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2021թ. դեկտեմբերի 6-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2022 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

**«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՍՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐԸ**

Հարց 1. Նկարագրեք դեպք, երբ տոկոսային ծախսումները ենթակա են կապիտալացման հիմնական միջոցին:

Հարց 2. Նկարագրեք դեպքեր, երբ ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքը ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը ձեռք է բերում բացառապես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պարագայում:

Հարց 3. Ո՞ր-ում հաշվառված, ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԱԶ-ի կողմից բեռնափոխադրման ծառայության դիմաց հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտը, ի՞նչ տոկոսադրույքով է հարկման ենթակա:

Ճիշտ պատասխան՝ 22 տոկոս:

Հարց 4. Նշված ակտիվներից ո՞րն է դասակարգվում որպես ընթացիկ՝

ա. վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված և կապիտալացված ծախսումները, որոնք ակնկալվում է, որ կփոխհատուցվեն ավելի քան մեկ տարի հետո

բ. անավարտ արտադրանքը, որը ակնկալվում է, որ պատրաստի արտադրանք կդառնա ավելի քան մեկ տարի հետո

գ. հիմնական միջոցը, որի արժեքը 50.000 դրամից պակաս է.

դ. հիմնական միջոցը, որի արժեքը 25.000 դրամից պակաս է.

Ֆարց 5. Նշված ծախսումներից, ո՞րը միանշանակորեն չի ներառվում պաշարների ինքնարժեքում.

ա. գերնորմատիվային ծախսումները՝ կապված աշխատուժի, նյութերի զծով ծախսումների անսովոր բարձր մակարդակի հետ.

բ. պաշարների գնման գինը

գ. պաշարների՝ տեխնոլոգիական գործընթացով նախատեսված պահպանման ծախսումները.

դ. վերադիր փոփոխում ծախսումները:

Ֆարց 6. Իրացման զուտ արժեքը՝

ա. վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած անուղղակի հարկերը.

բ. սովորական վաճառքի ժամանակ ձևավորվող գինն է.

գ. սովորական վաճառքի ժամանակ ձևավորվող գինն է՝ հանած չփոխհատուցվող հարկերը և այլ պարտադիր վճարները.

դ. սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ֆարց 7. Նշվածներից, ո՞ր հատկանիշը պարտադիր չէ, որպեսզի ներդրումը դասակարգվի որպես դրամական միջոցների համարժեք՝

ա. ներդրումը պետք է լինի կարճաժամկետ.

բ. ներդրումը պետք է լինի բարձր իրացվելի.

գ. ներդրման արժեքի փոփոխման ռիսկը պետք է եական չլինի.

դ. ներդրումը պետք է ունենա ապահովություն:

Ֆարց 8: Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճի արտացոլում.

ա. Դեբետ 231

Կրեդիտ 321

բ. Դեբետ 231

Կրեդիտ 626

գ. Դեբետ 231

Կրեդիտ 322

Ֆարց 9: Շենքի կառուցման համար օգտագործելու պայմանով որպես շնորհ ստացված նյութերի մուտքագրում.

ա. Դեբետ 211

Կրեդիտ 614

բ. Դեբետ 211

Կրեդիտ 421

գ. Դեբետ 211

Կրեդիտ 541

Ֆարց 10: Հավատարմագրային կառավարման նպատակներով դրամական միջոցների ստացում.

ա. Դեբետ 252

Կրեդիտ 531

- բ. Դերետ 252
Կրեդիտ 924
- գ. Դերետ 921
Կրեդիտ 924

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՍՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ

«ԷՍ ԷԼ ԷՍ» ՍՊԸ-ն ստեղծվել է 01.07.2019թ.-ին: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարել է հետևյալ գործարքները՝

Եկամուտներ

Հ/Հ	Գործարքի բովանդակություն	Գումար /հազ/
1	Շինարարական աշխատանքների կատարում	45 000
2	Շինարարարության մոնտաժային աշխատանքներ	12 000
3	Շինարարական նյութերի մեծածախ վաճառք	68 000
4	Շինանյութերի մանրածախ վաճառք /ներառյալ ԱԱՀ/	96 000
5	Տաս տոկոսով տրամադրված փոխառության վերադարձ	44 000
6	Պատճառված վնասի վերականգնում	12 000
7	ԱԱՀ-ի վերադարձ միասնական հաշվին	3 000
	ԸՆԴԱՄԵՆՆՆ	235 000

Ծախսեր

Հ/Հ	Գործարքի բովանդակություն	Գումար/հազ/
1	Վաճառված ապրանքների ինքնարժեք	102 000
2	Շինարարական և մոնտաժային աշխատանքների կատարման ինքնարժեք	18 000
3	Վարչական աշխատողների աշխատավարձ	56 000
4	Գործուղման վճար	8 000
5	Դեբիտորական պարտքերի անհուսալի դասակարգում	8400
6	Անհատույց ծառայությունների ստացում	12 000
7	Պարտավորության ներումից եկամուտ	5000
	ԸՆԴԱՄԵՆՆՆ	209 400

Լրացուցիչ տվյալներ՝

- Եկամուտների 2-րդ տողով նշված մոնտաժային աշխատանքները կատարվել են ՌԴ-ում:
- Եկամուտների 5-րդ տողով նշված փոխառության վերադարձի 1/2 մասը տոկոս է, մնացածը փոխառության գումար, որի 1/2 մասը վերաբերում է 2019թ.-ին հաշվեգրված տոկոսներին, մնացածը 2020թ.-ին:
- Եկամուտների 6-րդ տողով նշված վնասը վերականգնվել է ապրանքի տեսքով:
- Ծախսերի 5-րդ տողով նշված անհուսալի դասակարգված դեբիտորական պարտքերի կազմը հետևյալն է՝

Հ/Հ	Գործարքի բովանդակություն	Գումար/հազ/
1	Ա-գործնկեր	1000
2	Բ-գործընկեր	9000
3	Գ-նախկին աշխատակից	700

4	Դ-գործընկեր	50
5	Ե-գործընկեր	1250

Ա և Դ գործընկերների մասով կա համապատասխան դատարանի վճիռ, սակայն Դ-ի մասով վճիռը կայացվել է 2019թ.-ին, սակայն 2019թ.-ին անհուսալի չի ճանաչվել, քանի որ գործընկերը հավաստիացրել է, որ կվճարի: Բ գործընկերոջ պարտավորությունը գրավով ապահովված է, սակայն կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ Բ գործընկերը չի վճարի, քանի որ գրավի արժեքը բավականին արժեզրկվել է:

5. Վճարվել են նաև 8000 հազ. ՀՀ դրամի տոկոսներ, որից 6000 հազ. դրամը վերաբերում է որակավորվող ակտիվին, որի գծով աշխատանքները կավարտվեն 20.02.2021թ.-ին:

Հաշվետու ժամանակաշրջան է համարվում 2020թ.

Որոշել վճարման ենթակա շահութահարկի գումարը / հարկային վնասը:

ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

ԷՄ ԷԼ ԷՄ ՍՊԸ-ն ստեղծվել է 01.07.2019թ.-ին: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարել է հետևյալ գործարքները.

Եկամուտներ

Հ/Հ	Գործարքի բովանդակություն	Գումար/հազ/
1	Շինարարական աշխատանքների կատարում	45 000
2	Շինարարության մոնտաժային աշխատանքներ	12 000
3	Շինարարական նյութերի մեծածախ վաճառք	68 000
4	Շինանյութերի մանրածախ վաճառք /ներառյալ ԱԱՀ/	80 000 (96 000*83.33%)
5	Տաս տոկոսով տրամադրված փոխառության վերադարձ	11 000 (44000/2/2)
6	Պատճառված վնասի վերականգնում	12 000
7	ԱԱՀ-ի վերադարձ միասնական հաշվին	-
8	Պարտավորության ներումից եկամուտ	5 000
9	Անհատույց ծառայությունների ստացում	12 000
	Ընդամենը	245 000

Ծախսեր

Հ/Հ	Գործարքի բովանդակություն	Գումար/հազ/
1	Վաճառված ապրանքների ինքնարժեք	102 000
2	Շինարարական և մոնտաժային աշխատանքների կատարման ինքնարժեք	18 000
3	Վարչական աշխատողների աշխատավարձ	56 000
4	Գործուղման վճար	8 000
5	Դեբիտորական պարտքերի անհուսալի դասակարգում	1 000
6	Անհատույց ծառայությունների ստացում	-
7	Պարտավորության ներումից եկամուտ	-
8	Վճարված տոկոսներ	2000
	Ընդամենը	187 000

Հարկվող շահույթ 58 000

